ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

04-ը սեպտեմբերի 2025թ.

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 4-Ի՝ ՓՐԿԱՐԱՐԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հարգարժա՛ն փրկարարներ, վետերաններ, ՆԳՆ փրկարարար ծառայության հարգելի՛ աշխատակիցներ.

Ջերմորեն շնորհավորում եմ բոլորիդ մասնագիտական տոնի՝ Փրկարարի օրվա կապակցությամբ:

Դուք ստանձնել և նվիրումով իրականացնում եք մի աշխատանք, որը պահանջում է մասնագիտական և ֆիզիկական բարձր պատրաստվածություն, մշտական զգոնություն և կամային որակներ՝ ամենատարբեր բարդության հանգամանքներում արագ կողմնորոշվելու և արդյունավետ գործելու համար:

Արտակարգ և պատերազմական իրավիճակներում, աղետների ժամանակ մեր փրկարարները բազմիցս գործել են անհնարին թվացող սխրանքներ՝ հաճախ վտանգելով սեփական կյանքն ու առողջությունը: Անչափ կարևորում և բարձր եմ գնահատում ձեր հանրօգուտ ու սրտացավ աշխատանքը:

Առանձնահատուկ շնորհավորում և շնորհակալություն եմ հայտնում Կոտայքի մարզային փրկարարական վարչության անձնակազմին, Աբովյանի հրշեջ-փրկարարական ջոկատի ծառայողներին՝ համայնքում ստեղծված արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու, մշտապես կազմակերպված և արդյունավետ գործելու համար:

Մասնագիտական օրվա առիթով փրկարարներին առաջնահերթ մաղթում եմ քաջառողջություն, հաջողություն և վերելքներ ստանձնած պատասխանատու և շնորհակալ աշխատանքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ